

Սպասել Լավագույն Դրության

Հավատքի Դասեր Մաս 1

«Թող ըստ ձեր հավատի լինի ձեզ:» Մատթեոս 9:29

«Հավատը հուսացված բաների հաստատումն է.» Եբրայեցիս 11:1

Սպասել լավագույն դրությանը նշանակում է հաստատ վստահություն ունենալ թե Աստված է դեկավարում ապագան և որովհետև սիրում է ինձ, ծրագրում է լավագույնը իմ կյանքի համար:

«Կուսուցանեմ քեզ և կսովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որով պիտի գնաս. կխրատեմ քեզ, իմ աչքը քեզ վրա կլինի:» Մաղ 32:8

Ինչո՞ւ սպասել լավագույն դրության (Ա Թագ. 17:1-52)

1- Հարկում է Աստծոն

«Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, և ես կսպանեմ ... որպեսզի ամբողջ երկիրն իմանա, որ Բարայելն Աստված ունի:»

Ա Թագավորաց 17:46

2- Շատացնում է իմ կարողությունը

«Եվ Դավիթը իր ձեռքը կոխեց մախաթի մեջ, այնտեղից մի քար առավ և պարսաստիկով նետեց այն ու զարկեց փղշտացու ճակատին. քարը իրվեց նրա ճակատի մեջ, և նա երեսնիվայր ընկավ գետին:» Ա Թագավորաց 17:49

3- Քաջալերում է ուրիշներին

«Այդ ժամանակ Բարայելի և Հուդայի մարդիկ վեր կացան, աղաղակելով հետապնդեցին և հալածեցին փղշտացիներին մինչև հովիտը:» Ա Թագավորաց 17:52

Ինչպե՞ս սպասել լավագույն դրության երբ հանդիպում ենք դժվարությունների

1- Ամեն առավոտ Աստծո հետ կապ հաստատիր

Դավիթ: «Տե՛ր, առավոտից լսում ես իմ ձայնը, առավոտից առջևդ պիտի դնեմ իմ խնդրանքը և սպասեմ:» Մաղմոս 5:3

2-Խորհիր Աստծո խոստումների մասին օրվա ընթացքում

Դավիթ: «Ամբարիշտները սպասում են ինձ, որ ինձ կորցնեն, բայց ես մտաբերում եմ քո պատվիրանները:» Մաղմոս 119:95

Դավիթ: «Իմ սրտում թաքցրի քո խոսքերը...» Մաղմոս 119:11

«Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ անարատ, ինչ որ սիրելի, ինչ որ բարեհամբավ, առաքինի և գովելի, ա՛յն մտածեք:» Փիլիպ 4:8

«Աննկուն պահենք հույսի դավանությունը, որովհետև խոստացողը հավատարիմ է:» Եբրայեցիս 10:23

3- Վստահիր Աստծո սիրոն դժվար և վատ վիճակներում

Դավիթ: «Ինչո՞ւ ես տրտում, ո՞վ անձ իմ, ինչո՞ւ ես խռովված ինձանում. հույսդ դի՛ր Աստծու վրա, որովհետև էլի պիտի գոհանամ նրանից, որովհետև նա իմ երեսի փրկությունն է և իմ Աստվածը:» Մաղմոս 42:11

«Որովհետև սրանք մի որոշ ժամանակ ըստ իրենց կամքի էին խրատում, բայց նա՛ մեր օգուտի համար, որպեսզի նրա սրբությանը հաղորդակից լինենք:» Եբրայեցիս 12:10

«Որովհետև նա ինձ սիրեց, և ես կփրկեմ նրան. ես բարձր տեղում կպահեմ նրան, որովհետև նա ճանաչում է իմ անունը:» Մաղմոս 91:14

4- Հաղորդակցիր հավատացյալների հետ

Դավիթ: «Ես ընկերն եմ բոլոր նրանց, ովքեր վախենում են քեզնից և պահում են քո պատվիրանները:» Մաղմոս 119:63

«... Եվ մեր մեկտեղ հավաքվելը զանց չառնենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ միմյանց քաջալերենք:» Եբրայեցիս 10:25

Դավիթ: «Տիրոջո՞ւ նուրախացիր, և նա քո սրտի ուզածը կտա քեզ:» Մաղմոս 37:4

Հաջորդ Քարոզի Թեման:
Ընդարձակել Երևակայության Զորությունը
Հովիվ Սարո Խաչիկեան